ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 19-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից վերադառնում է Մայր Աթոռ:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու համար Երևանի «Զվարթնոց» օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթելու համար օդանավակայան էին եկել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանը և Ռաֆիկ Զարգարյանը:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Նորին Սրբությունը առաջնորդվում է Ս. Էջմիածին և «Հրաշափառ»-ով մուտք գործում Մայր տաճար:

Տաճարում Հայոց Հայրապետին, ի դիմաց Մայր Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի, բարիգալստյան ջերմ խոսք է ասում Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հուզումով Նորին Սրբությունը ասում է Իր պատասխան խոսքը Ս. Էջմիածնի նվիրական կամարների ներքո:

Մոտ երկու ամիս է, ինչ Հայոց Հայրապետը բացակայել էր Մայր Աթոռից: Ետևում էին մնացել հոգնեցուցիչ, բայց արդյունավետ ուղևորության օրերը: Այժմ Հայոց Հայրապետը դարձյալ Ս. Էջմիածնում է, Իր նվիրական վայրում:

Նորին Սրբությունը առաջնորդվում է Վեհարան, որտեղ Մայր Աթոռի միաբանությանը և մայրավանքի պաշտոնեությանը բաշխում է Իր հայրական օրհնությունները:

Բարի գալուստ Հայոց Հայրապետին Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ
ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ